«ՀԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՆԵ՛Ր, ԱՂՔԱՏՆԵ՛Ր»

Մի գիտնական երեկ այսպես դիմեց ԳԱԱ-ի դիմացի փոքրիկ հրապարակում հավաքված իր մոտ 300 գործընկերներին, որոնք 5 ամիս աշխատավարձ չստանալու համար բողոքի ցույցի էին ելել:

Ու թեեւ ցույցի կազմակերպիչները նախօրոք զգուշացրել էին, որ քաղաքական ելույթներ չունենան, պետությունից հիասթափված ու հուսահատված գիտնականների մեղադրանքներից բոլորին էլ բաժին հասավ:

«Մեզ այն օրն են գցել, որ սոված ենք մնում: Տեսե՛ք, բոլորը սոված են: Շատերը տանը սոված նստած են եւ նույնիսկ փող չունեին, որ գային այս ցույցին: Բողոքողներն ավելի շատ են, միայն այսքանն են կարողացել գալ: Չի ամաչո՞ւմ մեր երկրի ղեկավարությունը»,- գիտնականների ոչ արժանապատիվ այս վիճակը ներկայացնող պրոֆեսոր **Ալեքսանդր Գեւորգյանին** ոմանք փորձեցին սաստել, որ ղեկավարության հասցեին հանկարծ կոպիտ խոսքեր չասի: Գիտնականներն ու ցույցը կազմակերպած ԳԱԱ-ի արհմիությունների միացյալ կոմիտեն ուզում էին արժանապատիվ ցույց անել, կիրթ ու հանգիստ ներկայացնել իրենց պահանջները պետությանը, որն իրենց հանդեպ ճիշտ հակառակ վերաբերմունքն ունի: Բայց, ըստ գիտնականների՝ *«դանակը ոսկորին է հասել»*, եւ նրանք ստիպված են ասել այնպիսի բաներ, որ *«իրենց սազական չէ»*: Պետության ղեկավարների հասցեին հնչած մեղադրանքները հավաքվածները համաձայնության բուռն ծափերով ընդունեցին: Ալեքսանդր Գեւորգյանը մեր երկրի ղեկավարների վարած քաղաքականությունը համեմատեց Թուրքիայի հայակործան քաղաքականության հետ: Պետության ղեկավարների շնորհիվ՝ *«մեր գիտական հիմնարկները մեռած են, մեջները շունչ չկա»*: Պրն Ալեքսանյանը կոչ արեց՝ *«կամ մարդավարի ղեկավարեք, կամ մարդավարի հեռացեք»*: Շատ ավելի ուշ, դժգոհ ցույցի կազմակերպիչների ոչ այնքան խիստ պահանջներից, սպառնաց. *«Եթե մեր աշխատավարձերը չտան, մենք ավելի՛ ազդու միջոցների կդիմենք»*: Այդ միջոցները չբացահայտեց, բայց գիտնականներին կոչ արեց, որ հաջորդ անգամ ավելի շատ գան:

Քաղաքական ելույթներից զերծ մնալու զգուշացումներին ի պատասխան, մի տարեց գիտնական էլ մեղադրեց, որ *«քաղաքականությունից Ակադեմիան հեռու մնաց, որ հիմարները եկան իշխանության»*: Ըստ նրա՝ ՀՀ նախագահը Նոյի ու Տիգրան Մեծի արձանները կանգնեցրել է իր նստավայրում, *«բայց ինքը նրանց արածի նշանակությունը չի հասկանում»*: Նրանք արարում էին հանուն ազգի, իսկ Քոչարյանը կործանում է:

Գիտությունների դոկտոր **Սոնյա Մովսիսյանը** մեղադրյալների շրջանակը փոխեց. *«Այսօր մեր կողքին չէ մեր Ակադեմիան: Մենք չենք հավատում մեր Ակադեմիային, մեր նախագահին եւ ակադեմիկոսներին: Եթե նրանք իրենց ստացած բարձր աշխատավարձերով կիսվեին մեզ հետ, մեր վիճակն ավելի լավ կլիներ»*:

ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը այդպես էլ չմիացավ ցուցարարներին՝ թեպետ ԳԱԱ-ի արհմիությունների միացյալ կոմիտեի նախագահ **Կիմա Միքայելյանի** հավաստմամբ՝ Ֆադեյ Տաճատիչը համաձայն էր ցույցի գաղափարին, *«համաձայն չլինեն, չէինք անի»*:

ԳԱԱ-ի անունից հանդես եկավ ԳԱԱ գիտքարտուղար **Վլադիմիր Բարխուդարյանը,** որը վստահեցրեց, թե ԳԱԱ-ի նախագահությունը ցուցարարների հետ է եւ պաշտպանում է աշխատավարձ ստանալու նրանց պահանջը: Սրան զուգահեռ, սուր հարցադրումները մեղմելու ակնհայտ ցանկությամբ, կրկնում էր. *«Մեր հավաքը քաղաքական բնույթ չի կրում»: Գուցե հիշե՞լ էր, որ այս վիճակի համար իր որդին՝ նախկին նախարար Լեւոն Բարխուդարյանն էլ պակաս մեղավոր չէ:*

Հավաքը մեկ ժամ էլ չտեւեց: Գիտնականները հերթով բարձրանում էին ԳԱԱ-ի՝ բեմ ծառայող աստիճաններին, վերցնում բարձրախոսն ու ասում հոգում կուտակվածը: Բովանդակությունը գրեթե նույնն էր. պետությունը չի մտածում գիտության մասին, գիտական կյանքը մեռած է, գրեթե չի ֆինանսավորվում, հավաքարարը ավելի շատ է վարձատրվում, քան գիտնականը, ուզում են վերացնել ազգի սերուցքը հանդիսացող գիտնականներին եւ այլն: ԳԱԱ-ի պատերին փակցված ցուցապաստառներն ասում էին. *«Գիտնականին՝ մի կտոր հաց»*, *«Մենք մեծապատիվ մուրացկաններ չենք, մենք գիտնականներ ենք»*: Իսկ արհմիությունների միացյալ կոմիտեի փոխնախագահ **Մերի Չալտիկյանը** չէր հասկանում, թե այդ ինչպես է, որ ֆինանսների ու էկոնոմիկայի եւ այլ նախարարությունների աշխատողների լավ (՞) աշխատանքը խրախուսելու համար բյուջեում հատուկ ֆոնդեր են առանձնացնում, իսկ գիտնականներին աշխատավարձ չեն կարողանում տալ: Ցույցի կազմակերպիչները պահանջեցին ղեկավար այրերից մինչեւ դեկտեմբերի 22-ը վճարել իրենց 5 (շեշտեցին, ոչ թե՝ մեկ-երկու) ամսվա աշխատավարձը, այլապես համաակադեմիական ժողով կանեն, դա էլ չօգնի, կպահանջեն, որ իրենց համար «սպոնսոր» գտնեն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ